

**ՇՆՈՐՀԱՒՈՐԱԿԱՆ
ՆԱՄԱԿՆԵՐ ԵՒ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ**

26 giugno, 1996

**REVERENDISSIMO PADRE SAHAK GEMGEMIAN
ABATE GENERALE
CONGREGAZIONE MECHITARISTA DI VENEZIA
ISOLA DI SAN LAZZARO**

Reverendissimo Padre,

Apprendo la notizia dell'elezione della Paternità Vostra Reverendissima quale Abate Generale della Congregazione Mechitarista di San Lazzaro (Venezia).

Auguro di cuore che Ella possa guidare codesto Istituto in piena fedeltà e coerente continuità con il prezioso patrimonio di santità e di lungimirante impegno spirituale, culturale ed ecumenico che rende ancor'oggi così gloriosa e tanto amata la figura dell'Abate di Sebaste.

Nelle difficoltà e nei travagli del Suo compito l'assistanza la protezione del venerato Fondatore, la collaborazione unanime dei Confratelli e la certezza dell'attenzione e della vicinanza della Santa Sede.

Auspico vivamente che il Suo delicato compito potrà essere svolto in spirito di piena disponibilità ad un lavoro comune, in unità di intenti con questa Congregazione, espressione del ministero del Successore di Pietro, cui l'Abate Mechitar testimoniò una fedeltà inconcussa.

Al Padre Kevork Balian, cui Ella subentra nell'incarico, va l'espressione della mia riconoscenza e simpatia, soprattutto per il peso a lui imposto dalle recenti, non facili circostanze, e sempre portato in piena obbedienza alla volontà di Dio.

Con questi sentimenti invoco sulla Paternità Vostra e Suoi Confratelli tutti la Benedizione del Signore.

dev.mo

**ACHILLE CARD. SILVESTRINI, PREFETTO
ROMA**

1 Յուլիս, 1996

**ԳԵՐ. ՀԱՅՐ ՍԱՀԱԿ ՎԱՐԴԱՊԵՏ ՃԵՄՃԵՄԵԱՆ՝
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԲԲԱՀԱՅՐ ՄԽԻԹԱՐԵԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ
ՎԵՆԵՏԻԿ**

Սրտի խոր գոհունակութեամբ ստացանք այն հեռագիրը Վենետիկէն, որով կը յայտնուէր Մեզի Ձեր ընտրութիւնը որպէս Ընդհանուր Աբբահայր Վենետիկի Մխիթարեան Միաբանութեան:

Անձնապէս եւ յանուն Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Միաբանութեան եւ Գերագոյն Հոգեւոր Խորհուրդին՝ ջերմօրէն կը շնորհաւորենք Ձեզ եւ կ'աղօթենք առ Բարձրեալն Աստուած, որ Իր իմաստութեան շնորհը հեղու Ձեր վրայ, որպէսզի առաջնորդէք Վենետիկի Մխիթարեան Միաբանութիւնը պտղաբեր արդիւնաւորութեամբ ի սպաս հայ ժողովուրդի հոգեւոր արժէքներուն եւ մշակութային զարգացման:

Ձեր շուրջ համախմբուած Միաբան Հայրերու անվերապահ գործակցութեամբ եւ մեր հայ ժողովուրդի զաւակներու աջակցութեամբ՝ թող առաւել եւս ծաղկի Մխիթարեան Միաբանութեան առաքելութիւնը ի սպաս հայ ժողովուրդին:

Մայր Աթոռ Ս. Էջմիածնէն բիւր օրհնութիւն եւ սրտալիւր բարեմաղթութիւններ:

Հայրական օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Ա.

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. ԷՋՄԻԱՄԻՆ

26 Յուլիս, 1996

**ՎԵՆԵՏԻԿԻ ՄԽԻԹԱՐԵԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ ԱԲԲԱՀԱՅՐ
ՍԱՀԱԿ ՎԱՐԴԱՊԵՏ ԺԵՄՃԵՄԵԱՆ
ՎԵՆԵՏԻԿ - Ս. ՂԱԶԱՐ**

*Ընդունէք իմ շնորհաւորութիւնները Վենետիկի Մխիթարեան Միաբանութեան Աբբաճայր ընտրուելու առթիւ: Վստահ եմ, որ Ձեր պաշտօնավարութեան ընթացքում Միաբանութեան ազգային մշակութա-
թային ներոյժը յետադաջ զարգացում կ'ապրի:*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՆԱԽԱԳԱՀ
ԼԵՒՈՆ ՏԷՐ-ՊԵՏՐՈՍԵԱՆ
ԵՐԵՒԱՆ**

**ԱՌ ԳԵՐԱՊԱՅԾԱՌ Հ. ՍԱՀԱԿ ՎԱՐԴ. ԺԵՄՃԵՄԵԱՆ
ՆՈՐԸՆՏԻՐ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԲԲԱՀԱՅՐ
ՄԽԻԹԱՐԵԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ, - ՍՈՒՐԲ ՂԱԶԱՐ, ՎԵՆԵՏԻԿ**

Գերապայծառ Տէր,

Յնձազին կ'ողջունենք Ձեր ընտրութիւնը որպէս Ընդհանուր Աբբաճայր Մխիթարեան Միաբանութեան ի Վենետիկ եւ 12րդ յաջորդ անմահ Մխիթարի:

*Ծանրակշիռ է, գիտենք, Ձեր ստանձնած նոր պատասխանատու-
թիւնը, յատկապէս ներկայ դժուարին պայմաններու մէջ:*

Շնորհիւ սակայն Աստուծոյ առատազեղ շնորհներուն, նորակազմ վարչութեան բոլոր անդամներուն անվերապահ եւ անշահախնդիր գործակցութեան, եւ երկար տարիներու Ձեր բեղուն գործունէութեան Վանքին մէջ, լիայոյս ենք որ մեզի շատ հաճելի Միաբանութիւնը նոր եւ արդիւնաշատ շրջան մը պիտի բոլորէ ի փառս Աստուծոյ, ի պայծառութիւն Հայ Կաթողիկէ Եկեղեցւոյ եւ ի պարծանս Հայ Ազգին:

Պատրիարքական Թեմի Եպիսկոպոսներու եւ Վարդապետներու անունով, սրտազին մեր խնդակցութիւնները կը ներկայացնենք Ձեզի, միացնելով սրտաբուխ մեր աղօթքները, որպէսզի բարին Աստուծոյ յաջողութեամբ պսակէ Ձեր ջանքերը Միաբանութեան բարգաւաճման համար:

**ՅՈՎՀԱՆՆԷՍ ՊԵՏՐՈՍ ԺԸ.
ԿԱԹՈՂԻԿՈՍ ՊԱՏՐԻԱՐԺ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ
ՊԵՅՐՈՒԹ**

Գիւմրի – Աշոցք (Հայաստան)

24 Յունիս, 1996

**ԱՌ ԳԵՐԱՇԵՆՈՐՀ Հ. ՍԱՀԱԿ Ծ. ՎՐԴ. ԾԵՄԾԵՄԵԱՆ
ՆՈՐԸՆՏԻՐ ԸՆԴՀ. ԱԲԲԱՀԱՅՐ
ՄԽԻԹԱՐԵԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ
Ի Ս. ՂԱԶԱՐ ՎԵՆԵՏԿՈՅ**

Ուրախութեամբ իմացանք Ձեր աստուածահաճոյ ընտրութիւնը, որպէս յաջորդ Մեծն Մխիթար Աբբահօր Աթոռին, ի Սուրբ Ղազար:

Աղօթող ենք ջերմօրէն որ Սեւանի մեր Տիրամայրը եւ երնշ. մեր Հիմնադիրը օրհնեն Ձեզ եւ բոլոր միաբանները Ուխտիս, պարգեւելով պայծառութիւն Միաբանութեանս, իր հոգեւոր, առաքելական, մշակութային ու տնտեսական գործունէութեան մէջ, մեր Հիմնադրութեան 300ամեակի նաւակատիքի այս օրերուն, յաջորդ հարիւրամեակի եւ Քրիստոսի երրորդ հազարամեակի շնորհներով առցուն:

Խորին մեծաբանքով՝

**Հ. ՆԵՐՍԷՍ ԱՐՔ. ՏԷՐ-ՆԵՐՍԷՍԵԱՆ
ԱՌԱՋՆՈՐԴ ՀԱՅ ԿԹՂ. ՀԱՄԱՅՆՔԻ
Ի ՀԱՅԱՍՏԱՆ ԵՒ ՅԱՐԵՒԵԼԵԱՆ ԵՒՐՈՊԱ**

24 Յունիս, 1996

**ՄԽԻԹԱՐԵԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԻՒՆ
ԱԲԲԱՀԱՅՐ ՍԱՀԱԿ ԾԵՄԾԵՄԵԱՆ**

Գերյարգելի Արքահայր,

«Յառաջ»ի խմբագրութիւնը ուրախութեամբ կը շնորհաւորէ ձեր ընտրութիւնը որպէս Մեծն Մխիթարի 12րդ յաջորդ ու կը մաղթէ անկասելի կորով՝ շարունակելու անոր լուսաւոր գործը:

**ԱՐԺԻԿ ՄԻՍԱՔԵԱՆ
ՓԱՐԻՋ**

